Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ << ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի Յա. Զարոբյանի անվան N2 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ

Առարկա՝ Ռուսաց լեզու և գրականություն

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակները, գնահատման գործիքները դասվանդման շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ Մարինե Մարգարյան

2022

Բովանդակություն

Ներածություն

Գլուխ 1. Գնահատում

§1.1 Գնահատման հիմնական գործառույթները

§1.2 Ո՞ւմ և ինչի՞ն պետք է ծառայի գնահատումը

§1.3 Ի՞նչն ենք գնահատում և երբ ենք գնահատում

Գլուխ 2. Ընթացիկ գնահատում

§2.1 Ընթացիկ գնահատման հիմնական նպատակները, խնդիրները և գործառույթները

§2.2 Ընթացիկ գնահատման ձևերն ու ստուգման տեսակները

Գլուխ 3. Միավորային գնահատման իրագործման ընդունված տեսակները

§3.1 Բանավոր հարցում

§3.2 Գործնական աշխատանք

§3.3 Թեմատիկ աշխատանք

§3.4 Կիսամյակային ամփոփիչ աշխատանք

§3.5 Կիսամյակային և տարեկան գնահատականների ձևավորումը

Գլուխ 4. Ուսուցանող գնահատում

§4.1 Ուսուցանող աշխատանքների ձևեր ու տեսակներ

§4.2 Հայտորոշում

§4.3 Գնահատման սանդղակ «Ռուբրիկ»

§4.4 Դասի պլան

§4.5 Ուսումնական թղթապանակ

Եզրակացություն

Օգտագործված գրականություն

Ներածություն

Մարդ ձգտում է դեպի գիտելիքները, և հենց որ նրանում մարում է գիտելիքների ծարավը, նա դադարում է մարդ լինելուց:

Ֆ. Նանսեն

Կրթության որակի բարելավման խնդիրը եղել է և միշտ էլ կլինի արդիական, քանզի կրթության որակով է պայմանավորված պետության, անհատի, հասարակության վիճակն ու բարեկեցությունը, իսկ կրթության նկատմամբ ձևական և մակերեսային վերաբերմունքը կարող է վնասել անհատ- հասարակություն - պետություն շղթան: Ուստի այս խնդիրների լուծման մեջ առանցքային դեր է վերագրվում հանրակրթությունում աշակերտի գիտելիքի, կարողությունների ու հմտությունների գնահատման և արժևորման համակարգերին:

Կրթության որակը կրթակարգով, պետական չափորոշիչով և ծրագրերով ներկայացվող պահանջներին սովորողի համապատասխանության աստիճանն է:

Պետության կարևոր գործառույթը բովանդակության ընդհանուր պահանջների և սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների՝ չափորոշիչների սահմանումն է: Այդ մոտեցման վրա է հիմնված Հայաստանի հանրակրթության պետական կրթակարգը: Կրթության բոլոր մակարդակներում ժամանակակից ուսուցչից գործուն մասնակցություն է պահանջվում, քանզի հաղորդվող բովանդակության գործում՝ ուսուցիչը պետք է փորձի լուծել բովանդակության երկու մակարդակները միմյանց համապատասխանեցնելու խնդիրը: Այսօր մշակված բովանդակությանը առարկայական ծրագրերին ու դասագրքերին ավելանում են նաև չափորոշիչները: Այսինքն, խնդիր է դրվում ոչ թե սոսկ դասագրքի նյութը հաղորդել, այլ այնպես սովորեցնել, որի արդյունքում աշակերտի պատրաստվածության մակարդակը համապատասխանի չափորոշիչներին:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ընթացիկ գնահատումների կանոնակարգված համակարգ ունենալը կնպաստի ուսումնական ողջ գործընթացի գնահատման և որակի բարձրացմանն ու բարելավմանը:

Գնահատման նպատակներն են՝

1. ուսումնառության ընթացքում նախապես մշակված հստակ չափորոշիչների միջոցով սովորողների առաջընթացի խթանում,
2. ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
3. ուսման որակի բարելավումը,
4. ուսուցման և ուսումնառության ընթացքում ուսուցչի և սովորողի միջև

հետադարձ կապի ապահովում,

5. անդրադարձի և վերլուծության՝ ռեֆլեքսիայի կիրառում՝ որպես գնահատման կարևոր բաղադրատարր,
6. սովորողների ձեռքբերումների մակարդակի ամրագրում,
7. ստուգել սովորողի գիտելիքների մակարդակը, կարողությունների ու հմտությունների տիրապետման աստիճանը:

Գնահատման խնդիրներն են՝

1. Վերլուծել սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի ստուգման և գնահատման ժամանակակից համակարգերը և դրանց վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները,
2. բացահայտել սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի ստուգման և գնահատման գործընթացում առկա բացերն ու թերությունները, նշել դրանց վերացման ուղիները,
3. Լրամշակել սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի ստուգման և գնահատման տեսակների ու ձևերի համալիրը և հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Գլուխ 1. ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գնահատումն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Գնահատման միջոցով հնարավոր է բացահայտել յուրաքանչյուր սովորողի և դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

«Գնահատում » բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ:

Գնահատման ներդրվող համակարգը պիտի հիմնվի **արդարության, հուսալիության, անկողմնակալության, հավաստիության, հիմնավորվածության, մատչելիության, թափանցիկության** սկզբունքների վրա և ապահովի համադրելիությունը միջազգայնորեն ընդունված գնահատման չափանիշներին:

§ 1.1 Գնահատման հիմնական գործառույթները

Գնահատման հիմնական **գործառույթներն են՝**

1. Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատումը, ինքնակրթության և ինքնագնահատման, կրթական մի աստիճանից մյուսին անցման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը:
2. Սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը:
3. Դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը:
4. Սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը:
5. Սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը:
6. Մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը:
7. Չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ

նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը:

8. Հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

9. Սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը:

10. Դպրոցի հանդեպ ծնողների, համայնքի, հանրության վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Գնահատումը օգնում է բացահայտել ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները:

§ 1.2 Ու՞մ և ինչի՞ն պետք է ծառայի գնահատումը

Աշակերտի համար գնահատականը խրախուսանքի միջոց է, արձանագրում է ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Սովորողին ուղղված գնահատականը պետք է վերաբերի նրա կոնկրետ գործողություններին, արարքներին, գործունեության արդյունքներին, այլ ոչ թե անձին: Եթե սովորողը դեռ չի կարողանում խնդիր լուծել, դա դեռևս հիմք չէ դատողություններ անելու նրա մտավոր ընդունակությունների մասին:

Գնահատումը ուսուցչին անհրաժեշտ է աշխատանքը պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու, արդյունքը փաստելու համար:

Գնահատումը ծնողին անհրաժեշտ է երեխայի առաջընթացն արձանագրելու, դաստիարակության ձևերի շուրջ մտածելու, դրանք ավելի ճկուն և բազմազան դարձնելու համար:

Այլոց՝ շահագրգիռ կամ հետաքրքրված անձանց համար անհրաժեշտ է (մանկավարժական անձնակազմ և այլն) ուսումնական նյութի ազդեցությունը տեսնելու, երեխայի մասին տեղեկություններ ունենալու համար:

§ 1.3 Ի՞նչն ենք գնահատում

Գնահատում ենք՝

1. գիտելիքները
2. դիրքորոշումը
3. հմտությունները
4. Արժեքները

Ե՞րբ ենք գնահատում

Ըստ ուսումնական գործընթացի նպատակի կիրառվում են հետևյալ գնահատման տեսակները՝

1. **նախնական գնահատում՝**
2. **ընթացիկ գնահատում**
3. **ամփոփիչ գնահատում**
4. **պարտադիր ամփոփիչ գնահատում՝**

Նախնական գնահատում - օգնում է բացահայտել սովորողների պատրաստվածության աստիճանը, և պլանավորել ուսուցման հետագա գործընթացը:

Ընթացիկ գնահատում - ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը:

Ամփոփիչ գնահատում - ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացի առարկայի յուրացման աստիճանը:

Պարտադիր ամփոփիչ գնահատում - ստուգվում են սովորողի ուսումնական գործունեության վերջնական արդյունքները:

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումների կիրառումը դպրոցում նպաստում է սովորողի ուսումնական գործունեության արդյունքը որակավորելու և մի աստիճանից մյուսին անցումն ապահովելու համար:

ԳՆահատման ի՞նչ ձևեր կարելի է կիրառել

Գնահատումն իրականացվում է գրավոր և բանավոր, քանակական (բալերով, թվանշաններով) և որակական ձևերով, վերջիններս հաճախ զուգակցվում են:

Գնահատման գործիքներն են՝

1. հարցում
2. առաջադրանքի կատարում /շարադրություն,թելադրություն. . . .
3. հարցարան
4. թեստ
5. գնահատման սանդղակ
6. ուսումնական թղթապանակ
7. ստուգատես- ցուցադրություն և այլն:

Գլուխ 2 Ընթացիկ Գնահատում

Ընթացիկ գնահատման միջոցով պարզվում են սովորողների, ուսուցիչների և դպրոցների կողմից պետական, առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ընթացքն ու արդյունքները, սովորողների և ուսուցիչների ձեռքբերումներն ու դժվարությունները: Ընթացիկ գնահատումը նպաստում է դասավանդման և ուսումնառության որակի բարձրացմանը:

§ 2.1 Ընթացիկ գնահատման հիմնական նպատակները, խնդիրները և գործառույթները

Սովորողների ընթացիկ գնահատման համար սահմանվում են հետևյալ նպատակները՝

Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքի բացահայտումը, նրա ձեռքբերումների ու դժվարությունների արձանագրումը, հաշվառումը և վերլուծությունը

Կրթակարգով և պետական չափորոշիչներով ամրագրված հանրակրթության բովանդակային բաղադրիչների իրականացման բացահայտումը, փուլային ստուգումն ու գնահատումը:

Սովորողների ընթացիկ գնահատման նպատակներից բխում են հետևյալ խնդիրները՝

1. Գնահատման տարբեր ձևերի և տեսակների համակարգված կիրառման միջոցով հնարավորություն տալ սովորողներին առավելագույնս ցուցաբերել իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:
2. Գնահատման չափանիշների հստակեցման միջոցով բարելավել ուսուցման գործընթացի արդյունավետությունը:
3. Ուսուցանող գնահատման կանոնակարգման շնորհիվ ավելացնել սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող առարկաների նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը:
4. Նպաստել սովորողի անձնային որակների ձևավորման, վարքագծի, ինքնաճանաչման, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացմանը, բացահայտմանը:
5. Բարձրացնել ուսուցիչների պատասխանատվության և մասնագիտական

պատրաստվածության աստիճանը:

Ընթացիկ գնահատման նոր համակարգի համար ամրագրվում են հետևյալ գործառույթները.

ա. ճշգրտել սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակությունն ու ծավալը, խթանել յուրաքանչյուր սովորողի ուսումնական ակտիվությունը,

բ. հայտորոշել ուսուցման ընթացքը և արդյունքները,շաղկապել ուսուցումը ուսումնառության հետ,

գ. փոխադարձ կապ ապահովել սովորողի, նրա ծնողի հետ, հաշվառել սովորողի առաջադիմության ընթացքը,

դ. վերահսկել ուսուցման գործընթացը և արդյունքները:

§ 2.2 Ընթացիկ գնահատման ձևերն ու ստուգման տեսակները

Ընթացիկ գնահատման ձևերն են՝

1. **ուսուցանող գնահատում**
2. **միավորային գնահատում**

Ուսուցանող գնահատումն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և, ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկություններով, դիտողություններով կամ մեկնաբանություններով,

Միավորային գնահատումը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի յուրացման աստիճանը ստուգելու, և սովորողի գնահատականը գրանցելու-հաշվառելու միջոցով:

Միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո և ունի վերահսկող գործառույթ: Ուսուցանող գնահատումը իրականացվում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում, իսկ նպատակն է՝ սովորողի առաջադիմության բարձրացումն ու կրթության որակի բարելավումը :

Ստուգման ու հայտորոշման ձևերն ու տեսակներն են՝

1. բանավոր հարցում
2. թեմատիկ գրավոր
3. ինքնուրույն
4. գործնական

5. խմբային
6. համագործակցային
7. քննարկում
8. բանավեճ
9. կիսամյակային ամփոփիչ աշխատանքներ:

Առաջադրանքներն իրականացվում են երեք եղանակով՝ բանավոր, գրավոր և գործնական:

Գլուխ 3 Միավորային գնահատում

Միավորային գնահատումն աշակերտի ուսումնական ձեռքբերումների նիշային կամ թվային արտահայտությունն է, որի միջոցով կարող ենք պատկերացում կազմել աշակերտի՝ կրթական պահանջներին համապատասխանության աստիճանի մասին:

Միավորային գնահատման իրագործման ընդունված տեսակներն են՝

1. բանավոր հարցում,
2. գործնական աշխատանք,
3. թեմատիկ գրավոր աշխատանք,
4. կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

§ 3.1 Բանավոր հարցում

Բանավոր հարցման ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը: Բանավոր հարցման միջոցով ստուգում ենք ոչ միայն սովորողի մտապահման ու վերարտադրման ընդունակությունները, նյութի գիտակցված ընկալման մակարդակը, այլ նաև պարզում սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.

- բանավոր խոսք,
- վերարտադրություն,
- հաղորդակցություն,
- համագործակցություն,
- լեզվամտածողություն,
- գիտիլիքի յուրացում,

- տրամաբանություն,
- ստեղծագործական մտածողություն:

Բանավոր հարցումը իրականացվում է առանձին կամ գրատախտակի մոտ հարցման միջոցով, տնային աշխատանքների ստուգմամբ, համագործակցային տեխնոլոգիաների կիրառմամբ:

Բանավոր հարցումը կարելի է գնահատել հետևյալ չափանիշներով.

1. ակադեմիական գիտելիքի իմացություն,
2. կիրառելու կարողություն,
3. ներկայացնելու կարողություն,
4. ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողություն,
5. միջառարկայական կապեր տեսնելու կարողություն:

§ 3.2 Գործնական աշխատանք և կիրառություններ

Աշակերտը պետք է կարողանա ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս: Գործնական աշխատանքները թույլ են տալիս թուղթ ու գրիչից բացի օգտագործել նաև այլ միջոցներ: Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները: Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության,
- հմտությունների շարունակական զարգացմանը:

Գործնական աշխատանքները հիմնականում անցկացվում են 2 ձևով: Առաջին՝ աշակերտը դասընկերների ներկայությամբ կատարում է որոշակի գործնական առաջադրանք, որն ուղեկցվում է բացատրություններով: Մյուս աշակերտները հետևում են բացատրությանը և անհրաժեշտության դեպքում, կատարում համապատասխան շտկումներ կամ մեկնաբանություններ: Երկրորդ՝ սովորողների կարողությունների ու հմտությունների ստուգումը կատարվում է միաժամանակ՝ յուրաքանչյուր աշակերտին

տալով անհատական կամ տարբերակված առաջադրանք: Գործնական աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվում.

- տրված գործնական առաջադրանքին բնորոշ ընդհանրացումների,գաղափարներիու փաստերի ըմբռնման աստիճանը,
- ստեղծագործական մոտեցումը,
- առաջադրանքի համար անհրաժեշտ հաշվարկներ կատարելու կարողությունը,
- գործողությունների արդյունքները վերլուծելու և հաղորդելու կարողությունը:

§ 3.3 Թեմատիկ աշխատանք

Թեմատիկ գրավոր աշխատանքի միջոցով սովորողն ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր: Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է լինել բանավոր կամ գործնական: Թեմատիկ գրավոր աշխատանքը կարող է տրվել թեստերով, որոնցում կան տարաբնույթ առաջադրանքներ.

- ճիշտ պատասխանի ընտրությամբ,
- կարճ պատասխան պահանջող,
- գործնական, կիրառական նշանակություն ունեցող,
- կառուցվածքի փոփոխություն պահանջող,
- գծապատկերի կազմման պահանջով,
- բաց թողածը լրացնելու պահանջով,
- ապացուցում պահանջող,
- ստեղծագործական մոտեցում պահանջող:

Թեմատիկ գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում: Այդ գրավոր աշխատանքները գնահատվում են տաս միավորային համակարգով:

Կարևոր են նաև կարճաժամկետ գրավոր աշխատանքները, որոնց տրման նպատակն է որոշել ուսումնասիրված թեմաներից սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ու դրա հիման վրա կատարել եզրահանգումներ և պլանավորել անհրաժեշտ քայլեր:

§ 3.4 Կիսամյակային ամփոփիչ աշխատանք

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքը - կիսամյակի ընթացքում աշակերտի ձեռք

բերած գիտելիքի և կրթության բովանդակության «կարողություններ և հմտություններ» բաղադրիչի մակարադակն է, և կիսամյակի վերջում աշակերտի մնացորդային գիտելիքը:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքը կարող է իրականացվել բանավոր հարցման, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Հարցման ձևը որոշում են առարկայական մասնագետներն ու տնօրինությունը, գրավոր աշխատանքին տրվող ժամանակը որոշվում է՝ կախված ուսումնական առարկայից: Աշխատանքին տրվող ժամանակը պետք է համապատասխանի թեստի առաջադրանքները կատարելու աշակերտի հնարավորություններին, թեստը պետք է ապահովի աշակերտի առավելագույն, և չափորոշիչային նվազագույն գիտելիքներ ունեցող աշակերտի՝ անցումային, միավոր ստանալու հնարավորությունը: Թեստի յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար տրվում է առանձին միավոր, նշվում է գնահատման քայլը: Թեստի առաջադրանքների կատարման համար տրվող գումարային առավելագույն միավորը կարող է տարբեր լինել 10-ից: Կիսամյակային ամփոփիչ աշխատանքից աշակերտի ստացած վերջնական միավորը մոտարկվում (կլորացվում) է ամբողջ թվով, եթե այն ամբողջ չէ:

§ 3.5 Կիսամյակային ու տարեկան գնահատականների ձևավորումը

Սովորողի կիսամյակային առաջադիմության գնահատականը ձևավորվում է ստուգման 4 տեսակներից վաստակած գնահատականների հիման վրա, իսկ վերջնական գնահատականը 10 միավորային սանդղակով հաշվարկելու համար գործածվում է հետևյալ բանաձևը՝

ԿԳ = Բ + Գ + Թ + Կ

ԿԳ – կիսամյակային գնահատական Բ – բանավոր հարցում

Գ – գործնական աշխատանք

Թ – թեմատիկ գրավոր աշխատանք

Կ – կիսամյակային ամփոփիչ աշխատանք

Կիսամյակի վերջում, գնահատման յուրաքանչյուր բաղադրիչին համապատասխանող սյունակում նշանակվում է տվյալ բաղադրիչից աշակերտի ստացած գնահատականների թվաբանական միջինը:

Տարեկան գնահատականը 2 կիսամյակային գնահատականների միջին

թվաբանականն է: Եթե այն ամբողջ թիվ չէ, ապա որպես տարեկան գնահատական նշանակվում է այդ թվին անմիջապես հաջորդող ամբողջ թիվը, եթե 2-րդ կիսամյակային գնահատականը մեծ է առաջինից, հակառակ դեպքում՝ այդ թվին անմիջապես նախորդող ամբողջ թիվը:

Գլուխ 4 Ուսուցանող գնահատում

Առավել արդիական է դառնում գնահատումն օգտագործել ոչ միայն որպես ուսուցման արդյունքների ստուգման, այլ նաև որպես ուսուցումը բարելավելու միջոց:

Ուսուցանող գնահատումը սովորողի կրթական առաքնթացի նպատակով դասավանդման և ուսումնառության ընթացքին զուգակցվող որակական աշխատանքներն են: Ուսուցանող գնահատման նպատակն է՝ ճշգրտել դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը, դասավանդման արդյունավետ մեթոդները, շարունակաբար բացահայտել ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը:

Ուսուցանող գնահատման միջոցով ուսուցիչը կարող է պարզել ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները, և, վերլուծելով իրավիճակը, մշակել գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր սովորողի, դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու նպատակով: Գնահատման այս ձևի առանձնահատկություններից են հետադարձ կապի առկայությունը, որը տանում է ծագած թերությունները շտկող գործողությունների: Այդ դեպքում սովորողը համեմատվում է հիմնականում ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը:

Սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ ու փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական նյութի յուրաքանչյուր քայլի յուրացման աստիճանը և իրենց յուրաքանչյուրի առաջադիմության իրական պատկերը:

Ուսուցանող գնահատման արդյունքների հիման վրա, հետադարձ կապով, ուսուցիչը գնահատում է պետական չափորոշիչների, դասավանդման ծրագրերի և մեթոդների արդյունավետությունը: Ուսուցանող գնահատման դեպքում օգտագործվում են՝ ոչ թե թվանշանային կամ այլ նիշային գնահատումը, այլ աշակերտի առաջընթացը բնութագրող որակումներ և մեկնաբանություններ: Ուսուցանող գնահատման էությունը հնարավոր

բոլոր ձևերով սովորելուն աջակցելն է: Ձևավորող գնահատումն ուսուցանող գնահատման ենթամաս է, որի բնութագիրն ուսումնական նյութը յուրացնելու ընթացքում աշակերտի թույլ տված թերըմբռնումներն ու սխալները հայտաբերելը և դրանք վերացնելն է:Ուսուցանող գնահատման իրականացման նպատակով կարելի է օգտագործել աշխատանքների հետևյալ ձևերը՝

- կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանք,
- բանավոր հարցում,
- խմբային աշխատանք,համագործակցություն, նախագիծ,
- բաց հարցերով քննարկում,
- ինքնագնահատում,
- գործնական աշխատանք, կիրառություններ,
- ռեֆերատ

§ 4.1 Ուսուցանող գնահատման աշխատանքների ձևեր ու տեսակներ

Կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանք

Այս առաջադրանքի նպատակն է՝ պարզել ենթաթեմայի, նոր գաղափարի և ուսումնական առարկայի փոքր մասերի տիրապետման աստիճանը: Առաջադրանքները կարող են լինել տարբեր տեսակների, օրինակ՝ թելադրություն, շարադրություն, թեստ, գործանական աշխատանք, պատրաստի գծագրերով առաջադրանք, համառոտագրում:

Բանավոր հարցում

Բանավոր հարցումն օգնում է ուսուցչին բացահայտելու, թե աշակերտն ինչ կարող է անել: Բանավոր հարցման դեպքում պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին.

- հարցերն օգտագործել՝ բացահայտելու նպատակով, թե ինչ գիտի աշակերտը,ինչպես է հասկանում և ինչ կարող է անել,
- վերլուծել աշակերտի պատասխաններն ու հարցերը, որպեսզի բացահայտվի թե ինչգիտի աշակերտը, ինչպես է հասկանում և ինչ կարող է անել,
- հարցերն օգտագործվեն՝ աշակերտների հատկանշական թերըմբռնումները պարզելու և հետագա ուսուցումը բարելավելու համար,
- աշակերտի հարցերն օգտագործվեն նրան ըմբռնողունակությունը գնահատելու

նպատակով:

Բանավոր հարցման միջոցով կարելի է պարզել ուսուցված թեմայի տիրապետման աստիճանը, ինչպես նաև սովորողների լեզվամտածողությունը, հաղորդակցվելու կարողությունը, տրամաբանութունը և արագ կողմնորոշվելու հատկությունը:

Տնային աշխատանք

Աշակերտի կրթության համար տնային աշխատանքին կարևոր դեր է հատկացվում: Դպրոցներն ու կրթության կազմակերպման այլ ձևերը չեն կարող լիարժեք ապահովել դասապրոցեսից հետո սովորողի ուսումնառության շարունակությունը դպրոցում: Աշակերտն իր անհատական կամ համագործակցային աշխատանքները կատարելու է նաև տանը: Ուսուցիչը դասի ընթացքում կամ դրանից դուրս պետք է կարողանա ստուգել և աշակերտի հետ վերլուծել տնային աշխատանքներում աշակերտի ցուցաբերած առաջընթացն ու թերությունները: Տնային աշխատանքը նպաստում է սովորողի ինքնուրույն և խմբային աշխատանք կատարելու կարողության զարգացմանը: Տնային աշխատանքների ստուգումը, քննարկումն ու վերլուծությունը պետք է արվեն հնարավորինս հաճախ, քանի որ դա կօգնի աշակերտին լավ յուրացնել տվյալ ուսումնական նյութը և հետագայում ինքնուրույն վերացնել ի հայտ եկած թերությունները:

Ինքնուրույն կատարման համար ուսումնական առաջադրանք՝ տանը նդպրոցում

Այս առաջադրանքի նպատակն է՝ պարզել աշակերտի անհատական աշխատանք կատարելու կարողությունը, առարկային տիրապետելու մակարդակն, հետազոտական-

վերլուծական ունակությունը և գրականությունից օգտվելու կարողությունը: Ինքնուրույն աշխատելու համար աշակերտին կարելի է հանձնարարել որոշակի առաջադրանք՝ գործնական, ռեֆերատ և ստեղծագործական աշխատանք:

Քննարկում՝ բաց հարցերի միջոցով

Բաց են կոչվում այն հարցերը, որոնք մեր ունեցած գիտելիքով չունեն միարժեք պատասխան: Բաց հարցերով քննարկումների նպատակն է՝ աշակերտին ներգրավել առաջադրված հարցի պատասխանի շուրջ ծավալվող քննարկումների մեջ: Ի տարբերություն փակ հարցերի, որոնք ունեն միարժեք պատասխան, բաց հարցերը միարժեք պատասխան չունեն: Այստեղ ի հայտ են գալիս մտքի խորությունը, տեղեկաց-վածությունը, ընդհանուր զարգացվածությունը: Բաց հարցերով քննարկումների թեմաներ

կարող են լինել ազգային, մշակութային, հոգևոր զարգացման և ճիշտ արժեքային համակարգ ձևավորող առաջադրանքները: Բաց հարցեր առաջարկում է ուսուցիչը կամ աշակերտը:

Համագործակցային աշխատանք

Համագործակցային կամ խմբային աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին աշխատել խմբերով՝ բացահայտելու և դրսևորելու իրենց անհատականությունը, համատեղ աշխատանքին մասնակցելու ունակնություն և համագործակցելու կարողությունը: Ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է սովորեցնել սովորել: Համագործակցային ուսուցման դիպուկ բանաձև է Սենեկայի այն միտքը, որ սովորեցնողը սովորում է կրկնակի: Այդ պարագայում, սովորողը երկու դեպքում էլ շահում է. երբ լսում և սովորում է ուրիշից, ինչպես նաև երբ սովորեցնում է ուրիշին: Համագործակցային աշխատանքում պետք է մասնակցեն խմբի բոլոր անդամները, և յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ ընդհանուրի հաջողությունը պայմանավորված է իր մասնակցությամբ իսկ իր հաջողությունը՝ մյուսների: Այդ աշխատանքներից ավելի շատ օգտվում են թույլ աշակերտները, բայց ուժեղներն էլ կշահեն՝ հիմնականում սովորեցնելով:

Խմբային աշխատանքը նպաստում է աշակերտի սոցիալականացմանը, մտածողության ճկունացմանը, անձնական որոշ բարդույթներց ազատվելուն, գիտելիքների տրամաբանական մտածողության դրսևորմանը և քաղաքացիական գիտակցության բարձրացմանը: Կարևոր է, որ աշխատանքի կազմակերպման հիմնական բաղադրիչը խմբի յուրաքանչյուր անդամի մասնակցության խթանումն է առաջադրանքի կատարման

ընթացքում: Դասի սկզբում ուսուցիչը հանգամանորեն պետք է ներկայացնի դասի նպատակը, պարզաբանի ուսումնասիրվող նյութի կապն արդեն ծանոթ գաղափարների հետ, որպեսզի աշակերտները պարզ ու հստակ պատկերացնեն, թե իրենցից ինչ է պահանջվում և թե ինչ նպատակների իրագործման են իրենք ձգտելու տրված ժամանակահատվածում: Աշխատանքն ավարտելուց հետո վերլուծվում և քննարկվում է աշխատանքի ընթացքը, և յուրաքանչյուր աշակերտի՝ մասնակցության և ներդրման չափը: Համագործակցային աշխատանքի ավարտից հետո ուսուցիչը կարող է նաև թեստ հանձնարարել, գնահատել և արդյունքները վերլուծելով պարզել յուրաքանչյուր խմբի աշխատանքի արդյունավետությունը:

Ինքնագնահատում

Աշակերտի կրթական առաջընթացի համար կարևոր հիմք են նրա ճիշտ պատկերացումներն ուսումնական նյութի իր իմացության մակարդակի ու սեփական ուժերով թերությունները վերացնելու կարողության մասին: Այդ նպատակներին է ծառայում ինքնագնահատման կանոնավոր կիրառումը:

- Որպես մտածող և սովորող՝ ինքնուրույն պարզելու իր գիտելիքի մակարդակը,
- առաջադրանքը հստակ պատկերացնելուն,
- փնտրելու սեփական ուսման որակը բարելավելու միջոցներ, և մշակելու դրանք:

Ինքնագնահատան նպատակն է ընդլայնել աշակերտի ճանաչողությունը, իքնաճանաչումը, արժեքային համակարգի շրջանակները և պատասխանատվության գիտակցումը: Առաջադրանքի վերլուծությունից հետո կարևոր է, որ աշակերտը տեսնի և հասկանա իր թերությունները և դրանց շտկման համար դրսևորի ձգտում, կարողություն ու կամք: Օրիակ, եթե ուսուցչի հետ միասին կարդում են շարադրությունը, և աշակերտը կարողանում է նկատել իր սխալներն ու թերությունները և ասել, թե այժմ ավելի ճիշտ ու լավ ինչպես կգրեր, դա կլինի ինքնագնահատման մի դրսևորում: Աշակերտն աստիճանաբար պետք է պատասախանատու դառնա իր սովորելու համար:

Ինքնագնահատումը սովորողից պահանջում են իր կատարած աշխատանքների նկատմամբ հետադարձ դատողություններ անելու կարողություն, որն արդյունավետ սովորելու համար կարևոր առանձնահատկություն է: Ինքնագնահատման գործում կարևոր դեր է վերապահված ուսուցչին: Նա պետք է օգնի աշակերտին հասկանալ, թե ինչին պետք է փորձի հասնել աշակերտը:

Փոխադարձ գնահատում

Փոխադարձ գնահատումն արվում է զույգերով կամ խմբերով աշխատանքի միջոցով: Այստեղ դրսևորվում է դասընկերոջ թույլ տված սխալները տեսնելու և ճիշտ պատասխանը հիմնավորելու կարողությունը, աշակերտի ճիշտ մտածողությունը, ուրիշին օգնելու պատրաստակամությունը: Փոխոդարձ գնահատումը ենթադրում է նաև աշակերտի ինքնահամեմատությունը դասընկերոջ հետ: Դա առաջընթացը խթանող հանգամանք է: Փոխադարձ գնահատում կարելի է անել տնային աշխատանքներով: Օրինակ, աշակերտներին հանձնարարվում է տանը գրել օրինակներ և պարզաբանել, թե ինչպես

կյանքում կիրառել եռանկյունների նմանության վերաբերյալ գիտելիքը: Ուսուցիչը յուրաքանչյուր աշակերտի համար ընտրում է նրա աշխատանքն ստուգող այլ աշակերտ:

Սահմանում

Թեստը որոշակի նպատակով կազմված, Ուղղորդող ցուցումներով հարցերի շարք է, Սովորողներին գնահատելու և նրանց ուսումնական գործունեությունը արժևորելու համար:

Հիմնական նպատակները

1. Ընտրություն
2. Աշակերտի առաջադիմության արձանագրում
3. Հայտորոշում (սովորողի ուժեղ և թույլ կողմեր
4. Արժևորում
5. Հաշվետվություն

Թեստ

Տեսակները

1. Տեղակայման
2. Հայտորոշման
3. Ձեռքբերումների ստուգման
4. Ընդհանուր գիտելիքների ստուգման

Հատկորոշիչներ

1. Ո՞ր դասարանի համար է նախատեսված
2. Ի՞նչ նպատակ է հետապնդում
3. Թեստի գնահատման առավելագույն միավորը

4. Հատկացված ժամանակը
5. Գնահատման չափանիշների միավորա-յին աղյուսակ

§ 4.2 Հայտորոշում

Ուսուցման գործընթացի հաջողությունը պայմանավորված է ընթացիկ վիճակի ճիշտ հայտորոշմամբ:

Կրթության ոլորտում հայտորոշիչ ուսումնասիրման նպատակն է՝ պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում աշակերտի կամ ուսուցչի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները: Ուսուցանող գնահատման առաձնահատուկ տեսակ է հայտորոշիչ թեստը: Այն կարևոր է թե ուսուցչի և թե աշակերտի համար, քանի որ դրա արդյունքների հիման վրա ուսուցիչը պարզում է իր ուսուցանելու որակն ու արդյունավետությունը, իսկ աշակերտն իր ուսումնառության կարողությունները: Դրա նպատակն է՝ որոշել, թե արդյո՞ք սովորողը պատրաստ է շարունակելու հետագա ուսումնառությունը:

§ 4.3 Գնահատման սանդղակ <<Ռուբրիկ>>

Ռուբրիկ բառը ծագել է լատիներեն rubric (կարմիր կավ) բառից: Ժամանակին կարևոր բառերը գրվում էին կարմիր կավով: Ռուբրիկ հասկացության հայերեն համարժեքներն են գնահատման սանդղակը կամ սյունակաշարը: Ռուբրիկը գնահատման հնար է, ձև, որը սանդղակի միջոցով համադրում է սովորողների ըմբռնման որակը, հմտության աստիճանների տարբերակման չափանիշները և առաջադրանքների կատարման որակը: Ռուբրիկը կազմվում է այնպես, որ աշակերտը, առաջադրանք կատարելով, արդյունքում ստանում էորոշակի տեղեկություններ իր ուսումնառության մասին:

Ռուբրիկը օգնում է աշակերտին հասկանալ գնահատականի իմաստը, պատկերացում է տալիս տվյալ գնահատականի համար պահանջվող աշխատանքի մակարդակի մասին, ընդգծում է բացթողումները:

Գնահատման սանդղակները կարող են լինել ընդհանուր կամ որոշակի թեմայի համար: Ընդհանուր սանդղակը կարելի է որոշակիացնել յուրաքանչյուր առարկայի դասի, թեմատիկ աշխատանքի կամ առաջադրված այլ նպատակի համար:

Որոշակիացված սանդղակները վերաբերում են որևէ ուսումնական նյութի յուրացումն ստուգելու նպատակով կազմված թեստին կամ առաջադրանքին:

§ 4.4 План урока

Класс: 4

Тема: ,, До первого дождя"

Цели: знать слова по теме,

уметь выразительно читать, находить слова, отвечающие на вопросы кто? и что?

научить правильной устной речи, составлять предложения со словами.

Оборудование: учебник, тетрадь, ручка, рисунки зонтика, дождя, девочек.

Стимулирование: учитель начинает тему с вопросов: что означает слово дружить? Как называются люди, которые дружат друг с другом? Вы дружите друг с другом? Хорошие ли вы друзья? Составьте от слова дружба новые слова. Итак, как вы думаете, о чём наш урок? (ответы учеников).

Восприятие смысла: чем связаны рисунки и название текста ,,До первого дождя"? (ответы учеников). Учитель читает текст по обзацам, объясняет и переводит его, пишет на доске непонятные слова с объяснением. Затем ученики обсуждают вопросы к тексту и приходят к выводам.

Усвоение: чтение текста ,, До первого дождя" учениками, выполнение упражнений для закрепления нового материала. Заполнение кластера.



Домашняя работа: Текст выразительно читать. Упр. 6 стр 47.

Планируемые результаты: ученики сумеют и смогут Выразительно читать, ответить на вопросы и объяснить, как понимают смысл слова ,,дружба" и употреблять слово в устной речи.

§ 4.5 Ուսումնական թղթապանակ

Թղթապանակը աշակերտի ճանաչողական, ստեղծագործական աշխատանքի ինքնագնահատականն է, անդրադարձը՝ իր սեփական գործունեությանը:

Թղթապանակը սովորողի ուսումնական գործունեության արդյունքների և նմուշների կազմակերպման, ինչպես նաև արտաքին աղբյուրների, համապատասխան տեղեկատվական նյութերի հավաքածու է: Այն նախատեսված է սովորողի ուսումնական մակարդակի բազմակողմանի քանակական և որակական վերլուծության և նրա ուսումնական գործընթացի հետագա շտկման համար: Թղթապանակում ընդգրկված նյութերն արտացոլում են սովորողների ջանքերը, տարբեր բնագավառներում նրանց առաջընթացը և ձեռքբերումները: Թղթապանակը կրթական գործընթացում իրականացնում է հետևյալ գործառույթները.

Ախտորոշիչ: Արձանագրում է որոշակի ժամանակաընթացքում առկա առաջադիմությունը, որն էլ հնարավորություն է ընձեռում հետևելու աշակերտի կրթական աճին:

Նպատակադրում: Հետապնդում է կրթական նպատակներ, որոնք առաջադրված են չափորոշիչներով:

Դրդապատճառային: Խրախուսում է երեխաների, ուսուցիչների և ծնողների փոխհամագործակցությունը՝ դրական արդյունքների հասնելու համար:

Բովանդակային: Բացահայտում է ձեռքբերումներն ու կատարված աշխատանքները: Թղթապանակում ընդգրկված են տարբեր աշխատանքների և կրթական արդյունքների հավաքածուներ, որոնք ցույց են տալիս սովորողների ջանքերը, առաջադիմությունը և տարբեր առարկաներից ձեռքբերումները:

Զարգացնող: Ապահովում է դասարանից դասարան զարգացման, ուսուցման և կրթության շարունակականությունը:

Վարկանիշային: Ցույց է տալիս կարողությունների և հմտությունների մակարդակն ու շրջանակը:

Հաշվետվական: Այն ուսումնական գործընթացի յուրօրինակ հաշվետվություն է. ի՞նչ իմացավ երեխան, և ինչպես անցավ ուսուցման գործընթացը, ինչպես է նա մտածում, վերլուծում, համադրում, ստեղծում, բացահայտումներ կատարում, մտավոր, զգայական և սոցիալական մակարդակով ինչպես է համագործակցում իր հասակակիցների հետ և այլն:

Թղթապանակի գնահատման ձևը որոշում է ուսուցիչն աշակերտների և ծնողների հետ: Թղթապանակը գնահատում է ուսուցիչը: Թղթապանակի շնորհանդեսի գնահատումը կատարվում է սանդղակների միջոցով: Սանդղակում կարող են տեղ գտնել հետևյալ ցուցանիշները .

- ներկայացվող նյութի նպատակների որոշում,
- ձեռքբերումների համառոտ և բովանդակալից ներկայացում,
- ներկայացման ինքնուրույնությունը,
- աշակերտի սեփական դիրքորոշման արտացոլում,
- կատարված դատողությունների տրամաբանվածությունը և խոսքի մշակույթը,
- թղթապանակի գեղագիտական ձևավորումը:

Ուսումնական թղթապանակը գնահատելիս կարևոր դեր են կատարում տվյալ առարկայի ուսուցման հիմնական նպատակն արտացոլող չափանիշները: Այդպիսի չափանիշներ են ճկունությունը, մտածողության յուրօրինակությունը, խնդիրներ լուծելու ձևավորված ունակությունը, գործնական խնդիրներ լուծելու, նոր տեխնոլոգիաներ կիրառելու, մաթեմատիկական զեկուցումներով հանդես գալու ունակությունը, դիագրամներ և աղյուսակներ կիրառելու ունակությունը:

Եզրակացություն

Մանկավարժական գիտության և իրականության մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունենում: Մեզ արդեն մատչելի են նոր տեխնոլոգիաները, տեղեկատվության բազմաթիվ աղբյուրները, սակայն տեղեկատվության այս բազմազանությունն էլ իր հերթին խնդիրներ է առաջ բերում: Նոր նպատակները փոփոխություններ են բերել նաև կրթության բովանդակության մեջ: Զարգացնելով նորը, առաջ քաշվեց նաև ուսուցման, ստուգման ու գնահատման նոր մեթոդների անհրաժեշտությունը: Ուսուցիչները ակտիվ մասնակցում են այս գործընթացին, անցկացվում են վերապատրաստումներ՝ մասնագիտական զարգացման համակարգի շրջանակներում, ներդրվում են նոր մեթոդներ ու տեղեկատվության հետ աշխատելու, նորտեխնոլոգիաներից օգտվելու կարողություն:

Պետք է ուսուցիչները անընդհատ զբաղվեն ինքնակրթությամբ, ինքնակատարելագործ-մամբ: Եվ այս ամենը կնպաստի ավելի որակյալ կրթության:

Այս ամենի հետ շատ կարևոր տեղ ունի գնահատումը: Կրթական գործընթացի ժամանակակից մոտեցումներում, որպես սկզբունք, նվազեցվում է միավորային կամ նիշային գնահատման վրա կենտրոնանալը՝ իօգուտ ուսուցանող աշխատանքների, գործնական աշխատանքների ու գիտելիքների կիրառությունների:

Ելնելով վերը նշված նպատակներից և խնդիրներից կարող ենք ձևակերպել հետևյալ եզրակացությունները՝

1. սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակները, ձևերն և մեթոդները լրամշակման կարիք ունեն՝ հաշվի առնելով ներառական կրթության, կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները,
2. գնահատելով բարձրացնում և բարելավում ենք ուսման որակն ու արդյունավետությունը,
3. ուսուցչի պատրաստվածության բարձր մակարդակը սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների բարելավման և որակավորման լավագույն երաշխիքն է,
4. ուսուցման ձևերի ու մեթոդների պետական չափորոշիչների, ծրագրային նյութերի և թեմատիկ պլանների վերանայման անհրաժեշտությունը, բացթողումների շտկումը:

Ուսումնասիրելով <<Գնահատում>> թեման, ցանկանում ենք առաջարկել վերանայել գնահատման բալային համակարգը, ուսումնական 12-ամյա ժամանակահատվածը:

Օգտագործված գրականություն

1. Դասի պլանավորում և գնահատում /Ջինի Լ. Սթիլ, Քուրթիս Ս. Մերեդիթ և Չարլզ Թեմփլ / Պատրաստված «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի համար:

2. Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան: Ուսուցչի ձեռնարկ /Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ. Միքայելյան / ՀՀԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, 2010թ.ԵՐԵՎԱՆ

4. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, 2008 թ. ԵՐԵՎԱՆ

6. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Կրթության ազգային ինստիտուտի հրատ. , /Ա. Արնաուդյան,Ա. Գյուլբուդաղյան,Ս. Խաչատրյան / unicef 2004թ.ԵՐԵՎԱՆ

7. Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Մելանյա Աստվածատրյան, Անահիտ Արնաուդյան, Իզաբելա Օհանովա, ԱՅՈԵՔՍ ԵՐԵՎԱՆ 2003թ.

9. 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: